

կուծիները որ մտնում է պատմութեան ընթացքի մէջ Ստեփաննոսի դէմ եղած հալածանքը եմովպացի ներքինու և Կուռնելիոսի դարձից յետոյ բերելու պատճառով: 2^ե որ նոյն իսկ այդ հալածանքի առթիւ Երուսաղէմի հաւատացեալները ցրուեցան և շրջակայքում քարոզել սկսեցին: քայլ առ քայլ: հրեաներից նախ հրէութեան յարած օտարներին անցնելով: ինչպիսի մէկն էր եմովպացի ներքինին: և ապա բուն իսկ հեթանոսներին: ինչպէս Կուռնելիոս:

Հայր Սահակ մի գեղեցիկ սկզբունքի է հետեւում իւր դասադրքերի մէջ իւրաքանչիւր պատմութեան ս. Գրքից մի քանի նշանաւոր խօսքեր կցելով: * Բայց ցաւալի է: որ մանաւանդ այս ձեռնարկի մէջ շատ են այնպիսի վկայութիւններ: որոնք դրեթէ ամենեկին առնչութիւն չունին: կամ շատ կողմնակի առնչութիւն պատմած գէպքի հետ: այսպէս օր. եր. 12 վերջին երեք վկայութիւնները: Մեր կարծիքով աւելորդ է նաև նոյն խօսքի՝ թէ և շատ խորհրդաւոր լինի այդ խօսքը: անթիւ անգամ տեղի կրկնելը:

Մի շատ աչքի ընկնող թերութիւն: որի վերայ հեղինակի առանձին ուշադրութիւնը հրաւիրել կը կամենայինք՝ այդ բնագրի անձիշդ: երբեմն բոլորովին սխալ թարգմանութիւնն է տեղ տեղ նաև բընագրից դուրս բաներ ասելը: Օր. եր. 11. Պետրոս Անանիայի մօտ չէ գնացել: Անանիային թողնողները ծառաներ չեն: Սափիրան ո՛չ թէ Պետրոսի մօտ է գալիս: այլ բոլոր հաւատացեալների ժողովատեղին: Եր. 14. բնագրի իմաստն է. «Այն հաւատի զօրութեամբ: որ նորա անուան նկատմամբ մենք ունինք: սորան: որին դուք տեսնում էք և ծանաչում էք: նորա անունը հաստատութիւն (հաստատուն ուր) տուաւ: և այն հաւատը: որ նա է ներշնչում: դորան այս առողջութիւնը պարգևեց ձեր ամէնքի առաջ»: հրեաներին Պետրոս չէր կարող ասել: «այն հաւատը: որ դուք ունէիք գէպի Բերիտոս»: Գործք Առաքելոցի մէջ չէ ասած: թէ Ստեփաննոս և իւր ընկերները «սարկաւագ կոռուեցան»: — Առհասարակաւ կը լինէր: որ Արժ. հեղինակը այս թերութիւններից խուսափելու համար յունարէն բնագիրը կամ գոնէ Վայցգեկիկէրի գեղեցիկ թարգմանութիւնը աչքի առաջ ունենար: իսկ ամբողջ ձեռնարկի նկատմամբ աւելի նոր և ոչ աշխարհական: այլ հմուտ աստուածաբան մանկավարժների գրուածքներին հետեւէր:

Այս համառօտ նկատողութիւններով մեր նը-

Ժամագրքից բերելը տես եր. 102) անտեղի է ի հաշիւ: Ժամագրքից էլ ս. Գրքից է առնել:

պատակն է հարկաւ միայն նպաստել: որ նոր դասադրքի յաջորդ տպագրութիւններն ըստ կարելւոյն աւելի կատարեալ և նպատակայարմար լինին: ընդունելով միանգամ որ Հայր Սահակի ձեռնարկները մեր մէջ իրենց տեսակից առաջինն են և որ ցանկալի է նոցա որքան կարելի է աւելի շատ տարածուած տեսնել: Աւելին գուցէ հարկ կը լինի մեզ ասել: երբ լոյս տեսնէ խոստացուած «նիւթի մշակութիւնը»:

Կ. Վ.

Ա. Ի. Յ. Ա. Խ.

ԵՐԿԵՆՆԻՐՈՅԾ ՄԱՆԱՐ ԾԳ. ԲԱՐՍԻՈՒԴԱՐՅԱՆՑ.

Բագու. 1893 թ.

«Արցախը» գերապատիւ երկասիրողի մինչ ցարդ լոյս տեսած աշխատասիրութեանց պսակը կարելի է համարել. նա հարուստ է վիճակագրական: պատմական: աշխարհագրական և ազգագրական տեղեկութիւններով: Արցախի մանրամասն քննութիւնը թողնելով ուրիշ ժամանակի: առ այժմ մի փոքրիկ դիտողութիւն կը կամենայինք անել: Երես 25 Վ. գաւառն: որ ընկած է Պաղկանց գաւառի: Երասխ և Հակարի գետերի: Դիզափայտ և Քերս լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի մէջ: ստացած է Բերդաձոր: Բերդաձոր բնութեան: Վալաղշաղի ձոր: Վալաղարասի անունները: այժմ համարուում է Զարբայէլի գաւառ:» Նոյն և երես 399—401. — Այս պատմական գաւառը որոշելու համար գերապատիւ հեղինակը մատնացոյց է անում Խորենացւոյ մատենագրութեան եր. 609: Մովսէս Պաղանկատուացւոյ եր. 264 և Գտչայ վանից արձանագրութեան վրայ: Բայց մոռացել է վկայութեան կոչել այս մասին և Սիսական եր. 270:

Արցախի հեղինակը հետեւել է Հ. Ալիշանին Վալաղարասին — Բերդաձոր անուանելով:

Սիսականի և Արցախի հեղինակները՝ Վալաղարասին — Բերդաձոր մկրտելով հաւատացած են որ հին Արցախի Բերդաձոր գաւառի տեղը գտել սրտել են: Գերապատիւ հեղինակ հարց միամտացնելու համար այժմ մատնացոյց անենք Արցախի հին Բերդաձոր գաւառի տեղը: որ գտնուում է Զաւանշիր գաւառի Վաղահաս գիւղի մօտ: և ոչ թէ Զանգեզուր կամ Զարբայէլ գաւառներում: Արցախ եր. 195—193. «Վաղահաս գիւղի շրջակայքում: Հին Վաղահաս գիւղն գտնուում է նորի հարաւային կողմում: որ ունի ընդարձակ գիւղատեղի: կիսա-

ւեր մեծ եկեղեցի, և ճոխ հանգստարան և մի քա-
րեայ բարձր խաչ, որի երկարութիւնն աւելի է 3
մետրից, Կարմիր վանք, որ բարձր է փոքր ինչ աւերա-
կիցս, և որ փոքր եկեղեցի է առանց կաթուղիկէի,
բայց իւր մօտ կայ հանգստարանս: Ամէն մի ըն-
թերցող սոյն նկարագիրը կարդալով կարող է եղրա-
կացնել, որ Արցախի հեղինակն անշուշտ այցելել է
և իւր իսկ աչքովը տեսել է նկարագրած քարեայ
բարձր խաչը, 3 մետր բարձրութեամբ, Կարմիր
վանքը առանց կաթուղիկէի ելն ելն:

Եթէ Արցախի հեղինակը Ստրաբոնի նման
տեսածը իրրեւ տեսած նկարագրէր, լսածը՝ լսած,
այն ժամանակ այսպիսի սխալների մէջ չէր ընկնի:
Սարգիս Եպիսկոպոս Զալալեանի նման:

Արդէս մի առձեռն ապացոյց առաջ երբում
յիշեալ Աղաճասի Էրկան (Էրկար կամ բարձր)
խաչի նկարագիրը, բարձրութիւն 4 արշ. 5 վերշ.
լայնութիւն մի արշ. 4 վերշ. թանձրութիւն
3 վերշ. Կրաքարից և հիանալի քանդակներով խաչ
քար է: Աւերակ կողմը կաթուղիկէաձև, ներքեւինը
սեպաձև:

Խաչարձանիս արձանագրութիւնն է 11 տող
միջակ երկաթագիր որ է այսպէս՝

«Թիւն ՈԿԵ (665 = 1216) Ես Սակո որդի
Ասիտանգա կանգնեցի զխաչ բարեխաւս առ Աստ-
ուած հոգո իմն եւ ետու զիշեկրա այգին իւր
հոգով եւ վատապանաւ եւ եզնանտին երկիրն ի
սուրբ Գրիգոր Բերդաձորա եւ զբախերին մա-
տաղիսն, եւ զճաքեցանց երկիրն եւ Ա. Զաղաց
ի ժամատունն քն հոգո փրկութիւն ամուսնո իմո ի
հայրապետութեանն տէր Յոհաննիսի ով զայս խա-
փանէ եւ ընդաձորա սահման կամ ի վիճակն
ձեռն արկանէ կամ զրկէ ՅԺԸ (318) հայրապետացն
նշոված եղիցի ամէն»:

Սոյն արձանագրութիւնից հասկանալի է որ
Բերդաձորայ սուրբ Գրիգոր ուխտը—վանքը հեռու
չէ խաչարձանիցս, ուրեմն խաչարձանի շրջակայ-
քում պիտի որոնենք արձանագրութեան յիշատա-
կուած վայրերը, Բերդաձորայ սուրբ Գրիգորայ
ուխտ կամ Կարմիր վանքը գտնուում է Խոխիկայ
բերդի (թերեւ Խոխանաբերդ) հանդէպ, հին Աա-
ղաճասից բարձր գէպ արեւմուտք, Լարան կոչուած
ձորում, հին Աղաճասից 10 վերստ հեռւորու-
թեամբ:


Աւանքը նման է մի փոքրիկ օրօրոցաձև եկե-
ղեցու, ունի թաղակապ դաւիթ, եկեղեցու կամ
վանքի երկարութիւնը մէջէմէջ 8 արշ. 10 վերշ.
լայնութիւնը 4 արշ. 12 վերշ. ունի երկու դուռն
մին հարաւից, միւսը արեւմտից, մի լուսամուտ ա-

րեւելքից, սեղանում 2 խորհրդարան, դաւիթ մե-
ծութիւնը՝ երկարութիւնը 3 սաժէն, լայնութիւնը
4 արշ. 10 վերշ. հիւսիսային պատում՝ երկու խո-
րան, որմերը կամարակապ թաղերի վրայ է կանգնած:
Արմերի հաստութիւնը 15 վերշ. հարաւային կող-
մում մի փոքրիկ մատուռ: Աւանքի շուրջը աւերակ
կացարանների փլատակներով ծածկուած է:

Աւանքի արտաքին արձանագրութիւններն են.

Հիւսիսային պատի զրոյի գերն է՝ 15 տող ար-
ձանագրութիւն միջակ երկաթագիր, արձանագրի
մեծութիւնը 12 × 18 վերշոյ, որ է այսպէս. —
«ՈՒԸ (678 = 1229) ԹՎ. ես Տիրածայրս Ապարանից
բարեպաշտ Արքային Զալալին իմ ընչիւք գնեցի
զԳոխին երկիրն եւ ետու ի սուրբ ուխտս Բերդա-
ձորայ եւ սպասաւորք սորա ետուն ի տարին Գ. աւր
պատարագք ուխտան Աստուածածնին մինչի գալուստ
Տեառն անխափան կատարել վասն փրկութեան հո-
գոյ իմոյ արդ որ զժամ խափանէ իմ յանցանացն
տէր է առաջի Քրիստոսի»: Սոյն վանքի մնացեալ
բաղմաթիւ արձանագրութիւնները թողնելով ուրիշ
առթի յոյս ունենք, որ տակաւին պատեհու-
թիւն կ'ունենանք «Արցախի» բովանդակութեանը
դառնալու:

ԴՍ. Վ.



ԲԸՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳԱՍԱՒԱՆԳՈՒԹԻԵՆԸ

ՓՐԱՆՍԻԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ.

Արօնի դատաւանդումը դպրոցներից բառ-
նալուց յետոյ, Պրանսիայում դրա փոխարէն
սահմանեցին «բարոյագիտութեան» դասեր, որ
իրրեւ թէ պիտի կրօնի տեղը բռնէր: Թէ
գործնական ինչ հետեւեց ունեցաւ այդ
քայլը, ամենագեղեցիկ կերպիւ երևում է այդ
այսօրուան Պրանսիական ընկած կիսնքից:
Թէ ինչպէս են հասկանում Պրանսիայիք
«պարտաւորութեան», «հայրենասիրութեան»,
և այլ վերացական գաղափարները, պարզ ե-